Արձանագրություն N 4

ՋԿ-ԳՀԾՁԲ-19/1-Տ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 10 հունիսի 2019թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Շ. Բարխուդարյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Նազարյանը, Վ. Օհանջանյանը, Հ. Սիրունյանը և Է. Մխիթարյանը
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը

1. Գնահատման արդյունքների հաստատման վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայանելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Հարցումը ներկայացվել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 05.06.2019թ.-ին:

10.06.2019թ.-ին ստացվել է համապատասխան եզրակացությունը:

Հիմք ընդունելով ստացված եզրակացությունը, մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը և ամփոփելով գնահատման թերթիկները՝ «ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Քըրք Քըրքորյան և Այգեստան 2 թաղամասերի կոյուղագծերի կառուցման աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված ՋԿ-ԳՀԾՁԲ-19/1-Տ ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. Ընտրված մասնակից ճանաչել «ԻՐՏԻԳ» ՍՊԸ-ին.
   - Ընկերությանը պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:
   - Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին:
2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընտրված մասնակցի հետ սահմանված կարգով պայմանագիրը կնքվելու է սույն հայտարարությամբ սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

- Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ՝ _____ Շ. Բարխուդարյան

Անդամներ _____ Ս. Նազարյան

_____ Վ. Օհանջանյան

_____ Հ. Սիրունյան

_____ Է. Մխիթարյան

Քարտուղար _____ Ա. Սարգսյան